Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ. 108 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Հայոց լեզու և գրականություն» առարկայի ուսուցչի թափուր տեղի համար (22 դասաժամ զբաղվածությամբ):

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատանքը, որին հավակնում է,

2. Փաստաթուղթ (դիպլոմ) <<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3.Անձնագրի պատճենը

4. Ինքնակենսագրություն

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար 3x4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայցնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև դեկտեմբերի 13-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10:00ից 15:00-ը , բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքնային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ նոյեմբերի 30-ից, ըստ կարգի: Մրցույթը կանցկացվի «Երևանի հ. 108 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, դեկտեմբերի 17-ին՝ ժամը 14:00-ին:

Հասցեն Սիլիկյան թաղամաս փողոց 10:

Տեղեկությունների համար զանգահարել 010336100: